# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**12 օգոստոսի 2025թ.**

**2025թ-ի** օգոստոսի 4-12-ը ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում գտնվող ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի շենքում տեղի ունեցավ աշխարհագրության լաբորատորիայի սարքավորումների և պարագաների ձեռքբերման ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Մ. Մելիք-Բախշյան՝ | ՀՀԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի ձեռքբերումների իրականացման գործընթացի ղեկավար, |
| Գ. Բաղդասարյան՝ | ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի վերապատրաստումների իրականացման գործընթացի պատասխանատու համակարգող, |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ. Մելիք-Բախշյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական Ծրագրերի Կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի ձեռքբերումների իրականացման գործընթացի համակարգող՝ Ն. Ասրյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի օգոստոսի 4-ին, ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում գտնվող ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխարհագրության լաբորատորիայի սարքավորումներ և պարագաներ | 4,988,209.3982 | 2025-08-05 10:00:00 | 5,000,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ | Ք.Երևան Գայի պողոտա 31/34; +37498815665 | bghda88@gmail.com | 01075543 |
| 2 | Պրոտեխ-ԻՏ-Ուկրաինա ՍՊԸ | 04052 Ուկրաինա, ք. Կիև, Գլուբոչիցկայա փողոց 40, տարածք 60; +380938582939 | protech.it.ukraine@gmail.com | 418601814033 |

2025 թվականի օգոստոսի 5-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է.

- հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը,
- առաջարկվող ապրանքների ցանկի (բացվածքի) միավոր արժեքների գնացուցակը, համաձայն սահմանված ձևաչափի,
- իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, համաձայն սահմանված ձևաչափի:
- Միաժամանակ, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող դիմում հայտարարության փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի օգոստոսի 5-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

| Չ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ | 5,000,000.00 | 1420000000 | 20% | 1704000000 | 4150000 | 20% | 4980000.00 | |
| | Պրոտեխ-ԻՏ-Ուկրաինա ՍՊԸ | | 12998.93 USD | 0% | 12998.93 USD | 4988209.3982 | 0% | 4988209.39 | |

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2025թ օգոստոսի 5-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և համակարգի միջոցով ծանուցելով առաջարկել շտկման ենթակա անհամապատասխանություններ արձանագրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրած անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2025թ. օգոստոսի 7-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակցի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները մասամբ, մասնավորապես բացակայում է՝

- առաջարկվող ապրանքների ցանկի (բացվածքի) միավոր արժեքների գնացուցակը, համաձայն սահմանված ձևաչափի,
- իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, համաձայն սահմանված ձևաչափի:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2025 թվականի օգոստոսի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Ընթացակարգի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն:
4. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:
5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
6. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
7. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը*** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Մելիք-Բախշյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Գ. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________